Ֆինանսական ճգնաժամ

հեղինակ՝ Յարոսլավ Հաշեկ
թարգմանիչ՝ Ռոզա Պետրոսյան, Գուրգեն Գալստյան
աղբյուր՝ «Շաֆրանեկի ժառանգությունը»

Տասնհինգ տարի «Պրոխազկա և ընկ.» բանկային գրասենյակում ծառայող ծեր Շիման վերջապես այնքան քաջություն ունեցավ, որ սիրտ արեց թակել բանկիր Պրոխազկայի առանձնասենյակի դուռը՝ խնդրելու, որպեսզի նոր տարվանից իր ռոճիկն ավելացվեր քսան կրոնով:

Եվ ահա Շիման նստած է պարոն Պրոխազկայի դիմաց, որովհետև սա, խնդրանքը լսելով, գլխի շարժումով ցույց տվեց աթոռը: Շեֆը քայլեց առանձնասենյակում և, ձեռքերը թափահարելով, ասաց.

— Ես կարող էի անմիջապես ձեզ դուրս շպրտել նման լկտի խնդրանքից հետո, բայց տրամադրությանս տակ կես ժամ ունեմ և ուզում եմ՝ անկեղծ խոսել: Դուք ուզում եք, որ ձեր ամսական ռոճիկն ավելացնեմ քսան կրոնով, այսինքն, տարեկան՝ երկու հարյուր քառասուն կրոնով: Եվ նման բան համարձակվում եք խնդրել այնպիսի մի ժամանակ, երբ դրամային շուկայի գլխավերևում կախված է համընդհանուր ֆինանսական ճգնաժամի դամոկլեսյան սուրը: Ձեզ մի՞թե հայտնի չէ, որ Ալպին-Մոնտանի արժեթղթերի գինն ընկել է՝ 772-ից հասնելով 759,00-ի, իսկ Բեդրիժխովի գործարանների արժեթղթերը ոչ թե 940 են, այլ 938: Ջբրոեվկայի արժեթղթերը նույնպես գլորվում են ներքև, սիրելի Շիմա: Դրանց արժեքը նվազել է՝ 728-ից հասնելով 716,40-ի: Այս բոլորը, իսկապես սարսափելի է, իսկ դուք քսան կրոնի հավելում եք ուզում:

Պրոխազկան թափահարեց ձեռքերն ու հուզված շարունակեց.

— Արժեթղթերը բորսայում հաստատուն չեն: Նույնիսկ՝ դրանցից ամենահուսալին՝ ավստրիական վարկային բանկի արժեթուղթը: Արդյունքն այն է, որ 664,90-ի փոխարեն սա հինգ կրոն պակաս է արժենշվում: Տրանսպորտային ընկերությունների արժեթղթերով գրանցվում են միայն մանր գործարքները, պետական ճանապարհների արժեթղթերը ընկել են ամբողջ քսան կրոնով: Հունգարայի կառավարությանը չհաջողվեց Ֆրանսիայից հարյուր միլիոն փոխառություն ստանալ, իսկ դուք քսան կրանի հավելում եք պահանջում: Գերմանիան որոշել է վաճառել մետալուրգիական գործարանները, խոսակցություններ կան ավստրիական պետական կալվածքների վաճառելու մասին, իսկ դուք գալիս եք ինձ մոտ, կարծես խոսքը որևէ պատշաճ բանի մասին լինի, և ասում. «Ես տասնհինգ տարի ձեզ եմ ծառայում ազնվորեն ու հավատարմորեն, պարոն շեֆ, և, հաշվի առնելով իմ ֆինանսական դժվարությունները, համընդհանուր թանկությունը, տասը երեխաներս և ծակ կոշիկներս, համարձակվում եմ խնդրել, որ իմ ամսական ռոճիկը բարձրացնեք քսան կրոնով»:

Խեղճ մարդ, դուք էլ չգիտեք, թե որքան իրավացի եք. ֆինանասական դժվարությունները իսկապես վտանգավոր բնույթ են ստացել: Հարավային ճանապարհի արժեթղթերը նվազել են ամբողջ հինգ կրոնով, իսկ ես դրանցից ունեմ. . . . ասենք, ես չէ որ ձեզ պիտի հայտնեմ այդ մասին, բարեկամս: Մի մոռացեք, նույնիսկ Բուշտեգրադի երկաթուղու արժեթղթերը լուրջ շահույթ չեն խոստանում: Բուշտեգրադի երկաթուղու Ա լիտերի կուրսն 2515-ից ընկել է մինչև 2462, իսկ Բ լիտերինը՝ 1004-ից մինչև 976: Ուրեմն, ձեր արածը, աղավնայկս, գժություն է, երբ հավելում եք պահանջում: Ախր, դա ուղղակի խելագարություն է: Մտեք Պրագայի բորսա: Ի՞նչ հարստություն է վաճառվում, բայց գի՞նը: Ոչ մի պահանջարկ չկա: Բոլոր արժեթղթերի կուրսը գլորվում է ցած: Հաստատուն թղթեր չկան: Վարկային բանկի արժեթղթերը, որոնցով առաջ գործարքներ էին կնքվում 760-ով, հիմա արժենշվում են 750,75-ով: Սրա մասին ի՞նչ կասեք, հը: իսկ դուք, իմ վաղեմի բարեկամ, հավելում եք դեռ պահանջում: Իսկ դուք համառորեն պահանջում եք, որ ձեր խնդրանքը բավարարվի, չնայած այն բանին, որ նույնիսկ Շվեյցարիայի կառաավությունը իրեն օդի պես անհրաժեշտ երկու միլիոն փոխառությունը ստանալու հույս չի կարող ունենալ: Բորսայի տեղեկագրությունները վկայում են մոտալոտ ճգնաժամի մասին, և կարելի է ցնդել այս տարվա հաշվեկշռի պատճառով: Ռումինիան, Թուրքիան, Բուլղարիան, Հունաստանը մի գրոշ անագմ վարկ չեն կարող ստանալ, իսկ դուք ուզում եք, որ ես ձեր աշխատավարձն ավելացնեմ:

Իսպանիան, Պորտուգալիան և Իտալիան ոչ մի տեղ չեն կարող վարկ տալ: «Ֆրանս-ֆրեր» բանկիրական տունը Լիոնում Մարոկոյի կոնֆլիկտի հետևանքով հարյուր հիսուն միլիոնի վնաս է կրել, իսկ ձեր բոլորովին էլ վեջը չէ, քանի որ գալիս եք և ասում. «Պարոն շեֆ, խնդրում եմ՝ աշխատավարձս ավելացնեք քսան կրոնով»: Իմ բարեկամ, դուք գիտե՞ք, որ խոսում են Ռոսիցկու ածխահանքերի ու Բեդրժիխովսկու գործարանների միանալու մասին: Իսկ դուք գիտե՞ք, որ «Աննա-Մարիա» հանքավայրի փայաբաժնի վաճառելը տարեկան շրջանառությունը նվազեցնելու է քսան հազարով: Ոչ մի տեղ բորսային սպեկուլյացիա անելու հնարավորություն չկա: Գնեք Պոդոլսկի ցեմենտի գործարանի արժեթղթերից և կտեսնեք, թե ինչ օրն եք ընկնելու: Եվ փորձեք դրանցով բորսա մտնել. ըհը, դուք օրորում եք ձեր գլուխը՝ չեք մտնի: Առայժմ հաստատուն է Կոլինի արհեստական պարարտանյութերի գործարանի արժեթղթերի կուրսը. դրանց համար հիմա պիտի 379 վճարեք, իսկ ես գնել եմ 382-ով, հետևաբար յուրաքանչյուրի մեջ երեք կրոն եմ կորցրել: Դուք պարզապես զարմացնում եք ինձ, բարեկամաս: Նստել եք կոճղի նման: Գրողը տանի ձեզ՝ շաքարի ընկերությունների հետ: Վստահեցնում եմ՝ նրանք երերուն կուրս ունեն, թեկուզ մեջտեղից երկու կես լինես, միևնույն է՝ դրանց համար 266,50-ից ավելի չես ստանա: Ինչպես Կոլբենի գործարանի արժեթղթերը, դրանք նույնպես ոչ ոք սիրտ չի անի ինձ առաջարկել: Հավատացնում եմ ձեզ: Այդպիսի մարդուն դուրս կշպրտեմ: Իսկ գիտե՞ք, որ Վինենբերգի շինարարական կազմեկոպությունը սնանկացման եզիկն է, որ Լյուբլանայի վիճակախաղի տոմսերի գինն ընկել է: Իսկ գիտե՞ք, որ ամերիկյան միլիարդատեր Բրաունը ինքնասպանություն է գործել: Ատրճանակով: Իսկ գիտեք, որ ֆինանասիստներ Մյուլլերը, Սկալատը, Կովները, Հյուբները ինքսպան են եղել, որ Ռեշեն,

Կինեն, Մենը, Բյուլեխարը կախվել են, որ Կարելտը, Մորիսոնը, Կոմոտը և բանկիր Համերլը իրենց գործակիցների հետ ջուրն են նետվել ու խեղդվել: Իսկ դուք գիտե՞ք, որ չորս կողմը սնանկանում են ու սնանկանում, որ վառվում են Ալյասկայի քարածխի հանքախորշերը և դրանցից մեկի մեջ է իրենց գցել ամերիկյան քարածխի արքան: Իսկ գիտեք, որ Ուրալի ծծմբի հանքաշերտերը ոչնչացել են երկրաշարժի հետևանքով, որ Զալցբուրգի երկաթգծի ու տրամվայի ընկերությունը սնանկացել է: Ոչ, դուք այդ բոլորը չգիտեք, թե չէ ինձանից քսան կրոնի հավելում չէիք խնդրի. . .

Բանկիր Խրոխազկան թփթփացրեց անշարժ նստած Շիմայի ուսին, իսկ սա գլորվեց հատակին. խեղճի վերջույթները սկսել էին սառչել:

Ֆինանսական այդ բոլոր ողբերգություններից նրա սիրտը պայթել էր: